



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

« 10 » « հոկտեմբեր » 2024 թ. № 267-Լ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՍՏՈՒԳԱՐՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1023-Ն որոշման հավելվածի 14-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Հաստատել՝

- 1) Էկոպարեկային ծառայողի հատուկ ուսուցման ստուգարքի՝ ֆիզիկական պատրաստվածության ստուգման նորմատիվները՝ համաձայն հավելված N 1-ի,
- 2) Էկոպարեկային ծառայողի հատուկ ուսուցման ստուգարքի՝ կրակային պատրաստվածության ստուգման նորմատիվները՝ համաձայն հավելված N 2-ի:

Հ. ՄԻՄԻԴՅԱՆ

7/10/2024

X

ՀԱԿՈԲ ՄԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

« 10 » « հոկտեմբեր » 2024թ.  
ք. Երևան

Հավելված N 1  
 շրջակա միջավայրի նախարարի  
 2024 թվականի հուլիսի 10-ի ի N 267-Լ հրամանի

**ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ**  
 ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՏՈՒԳԱՐՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ  
 ԱՏՈՒԳՄԱՆ

1. Ըստ սեռատարիքային խմբերի ներկայացվում են ֆիզիկական պատրաստվածության հետևյալ պահանջները՝  
 1) արական սեռի անձանց համար՝

NN ը/կ	Վարժության անվանումը	Վարժության կատարման պայմանները (կարգը)	Գնահատա- կանը (միավոր)	Տարիքային խմբերը							
				1-ին խումբ (24 տարեկան և ցածր)	2-րդ խումբ (25-29 տարեկան)	3-րդ խումբ (30-34 տարեկան)	4-րդ խումբ (35-39 տարեկան)	5-րդ խումբ (40-44 տարեկան)	6-րդ խումբ (45-49 տարեկան)	7-րդ խումբ (50 տարեկան և բարձր)	
Նորմատիվ 1											50 և բարձր տարիք ունեցող- ները սույն նորմա- տիվները
1.	Վազք՝ 100 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի վազքուղում կամ ամեն տեսակի	բավարար՝ 3	17.50	18.00	18.50	19.00	19.50	20.00		
			լավ՝ 4	17.00	17.50	18.00	18.50	19.00	19.50		

		ծածկույթով հարթ տարածքում	գերազանց՝ 5	16.50	17.00	17.50	18.00	18.50	19.00	չեն հանձնում	
Նորմատիվ 2											
2.	Ձգումներ՝ պտտածողի վրա (անգամ)	Կատարվում է պտտածողից ուղիղ ձեռքերով կախված վիճակում: Ձգվելիս ծնոտը պետք է անցկացնել պտտածողից վեր	բավարար՝ 3	5	4	3	2	-	-		
			լավ՝ 4	7	6	5	3	-	-		
			գերազանց՝ 5	11	9	7	5	-	-		
	Սեղմումներ՝ հենում՝ պառկած (անգամ)	Ձեռքի ծալում և ուղղում, հենում պառկած դիրությունից	բավարար՝ 3	-	-	-	-	13	11		
			լավ՝ 4	-	-	-	-	17	15		
			գերազանց՝ 5	-	-	-	-	21	19		
Նորմատիվ 3											
3.		Անցկացվում է ցանկացած	բավարար՝ 3	5.00	5.10	5.20	5.30	5.40	5.50		

Վազք՝ 1000 մետր (րոպե, վայրկյան)	տեղանքում ընդհանուր կամ առանձին՝ մեկնարկից	լավ՝ 4	4.25	4.35	4.45	4.55	5.10	5.25
	գերազանց՝ 5	4.05	4.15	4.25	4.35	4.55	5.15	

2) իգական սեռի անձանց համար՝

NN ը/կ	Վարժության անվանումը	Վարժության կատարման պայմանները (կարգը)	Գնահատականը (միավոր)	Տարիքային խմբերը				
				1-ին խումբ (24 տարեկան և ցածր)	2-րդ խումբ (25-29 տարեկան)	3-րդ խումբ (30-34 տարեկան)	4-րդ խումբ (35-39 տարեկան)	5-րդ խումբ (40 տարեկան և բարձր)
Նորմատիվ 1								
1.	Վազք՝ 100 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի	բավարար՝ 3	21.50	22.00	-	-	40 և բարձր տարիք ունեցողները սույն նորմատիվները չեն հանձնում
			լավ՝ 4	21.00	21.50	-	-	
			գերազանց՝ 5	20.50	21.00	-	-	
	Վազք՝ 60 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի վազքուղում կամ ամեն տեսակի ծածկույթով հարթ տարածքում	բավարար՝ 3	-	-	15.00	16.00	
			լավ՝ 4	-	-	14.00	15.00	
			գերազանց՝ 5	-	-	13.00	14.00	
Նորմատիվ 2								

2.	Սեղմումներ՝ հենում- պառկած (անգամ)	Ձեռքի ծալում և ուղղում, հենում պառկած դրությունից	բավարար՝ 3	7	6	5	4
			լավ՝ 4	11	10	9	8
			գերազանց՝ 5	12	11	10	9
Նորմատիվ 3							
3.	Մարմնի բարձրացում մեջքի վրա պառկած (անգամ)	Ելման դիրք՝ ձեռքերը ծոճրակին միացրած, ոտքերը՝ ծնկերը 90° ծալված, և ուսերը՝ սեղմված հատակին: Կատարվում է արմունկների դիպչում ազդրերին՝ վերադառնալով ելման դիրք	բավարար՝ 3	14	13	12	11
			լավ՝ 4	19	17	16	15
			գերազանց՝ 5	24	21	19	18

2. Նորմատիվների թեթևացում՝ հաշվի առնելով անձի՝ սեփական քաշի և տեղանքի առանձնահատկությունները

NN ը/կ	Վարժության անվանումը	Վարժության կատարման պայմանները (կարգը)	Արական սեռի 90-կգ-ից և իգական սեռի 70 կգ-ից բարձր քաշ ունեցողներ	Ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի բարձրություններում
1.	Ձգումներ՝ պտտաձողի վրա (անգամ)	Կատարվում է պտտաձողից ուղիղ ձեռքերով կախված վիճակում: Ձգվելիս ձնոտը պետք է անցկացնել պտտաձողից վեր	-1	-1
2.	Սեղմումներ՝ հենում՝ պառկած (անգամ)	Ձեռքի ծալում և ուղղում, հենում պառկած դրությունից	-1	-1
3.	Մարմնի բարձրացում մեջքի վրա պառկած (անգամ)	Ելման դիրք՝ ձեռքերը ծոծրակին միացրած, ոտքերը՝ ձնկերը 90° ծալված, և ուսերը՝ սեղմված հատակին: Կատարվում է արմունկների դիպչում ազդրերին՝ վերադառնալով ելման դիրք	-1	-1
4.	Վազք՝ 100 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի վազքուղում կամ ամեն տեսակի ճածկույթով հարթ տարածքում	+2	+1
5.	Վազք՝ 60 մետր (վայրկյան)	Անցկացվում է մարզադաշտի վազքուղում կամ ամեն տեսակի ճածկույթով հարթ տարածքում	+2	+1
6.	Վազք՝ 1000 մետր (վայրկյան)	Անցկացվում է ցանկացած տեղանքում ընդհանուր կամ առանձին՝ մեկնարկից	+10	+10

1. Ֆիզիկական պատրաստվածության նորմատիվները թույլատրվում է հանձնել ծառայողական համազգեստով:
2. Երեք վարժությունից թույլատրվում է անբավարար գնահատական ստանալ միայն մեկից, և այդ վարժության համար հաշվարկվում է 2 միավոր:
3. Անձինք ֆիզիկական պատրաստվածությունից հանձնում են ստուգարք համապատասխան աղյուսակում նշված 3 նորմատիվներից:
4. Ֆիզիկական նորմատիվները փոփոխվում են՝ ելնելով անձի՝ սեփական քաշի և տեղանքի առանձնահատկություններից՝ համաձայն 2-րդ կետի:
5. Ստուգարքը գնահատվում է՝ 14 և բարձր միավորի դեպքում՝ 5 (գերազանց), 11-13 միավորի դեպքում՝ 4 (լավ), 9-10 միավորի դեպքում՝ 3 (բավարար), 8 և ցածր միավորի դեպքում՝ 2 (անբավարար):

## ՆՈՐՄԱՏԻՎ

### ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՏՈՒԳԱՐՔԻ՝ ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են էկոպարեկային ծառայողների (այսուհետ՝ ծառայող) հատուկ ուսուցման դասընթացների ավարտին ատրճանակով կրակային պատրաստության ստուգման համար կրակային վարժաձևի համապատասխան նորմատիվը:
2. Ծառայողի կրակային պատրաստության ստուգումն անցկացվում է ատրճանակից մարտական հրաձգություն անցկացնելու միջոցով:
3. Կրակային պատրաստության ստուգման ժամանակ ծառայողին հատկացվում է 3 հատ փամփուշտ՝ կրակային պատրաստականության ստուգարք հանձնելու համար:
4. Կրակային պատրաստության ստուգումն իրականացվում է ծառայողի կանգնած դիրքից 20-25 մետր հեռավորության վրա՝ 1-ից 10 միավորներով գծանշված օղակաձև գնահատականներով ընդգծված թղթի թիրախի վրա:
5. Կրակային պատրաստության ստուգարքի գնահատականը համարվում է դրական, եթե ծառայողը հրաձգության ժամանակ 3 փամփուշտով հավաքել է 12 և ավելի միավոր, հակառակ դեպքում ծառայողը համարվում է կրակային պատրաստության նորմատիվները չհանձնած (ստուգարքը՝ «չստուգված» գնահատված):